ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. դեկտեմբերի 11 N 509-Ա

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԻԼՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդ.,223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, 227-րդ հոդվածով, 228-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<hraparak.am>> առցանց լրատվամիջոցում <<Դպրոցում վխտում են մկները>> վերտառությամբ՝ 2023թ-ի նոյեմբերի 23-ին զետեղված հոդվածի կապակցությամբ Արագածոտնի մարզի <<Ծիլքարի միջնակարգ դպրոց>> /այսուհետ՝ Դպրոց/ ՊՈԱԿ-ի տնօրեն /այսուհետ՝ Տնօրեն/ Ա.Հովհաննիսյանի կողմից 2023թ-ի նոյեմբերի 24-ին և դեկտեմբերի 1-ին ներկայացրած բացատրագրերում նշված փաստական հանգամանքներն առ այն, որ Դպրոցի անունից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վարձակալության և օգտագործման արդյունքում 2023թ-ին ու դրան նախորդած երկու տարիներին ստացած եկամուտները թեև հանձնաժողովային կարգով տնօրինվել է Դպրոցի կարիքների համար, սակայն այն Դպրոցի բյուջե չի մուտքագրվել և չի արտացոլվել ֆինանսական փաստաթղթերում ու հաշվետվություններում, ինչի արդյունքում Տնօրենի կողմից անտեսվել են <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2010թ-ի դեկտեմբերի 2-ի թիվ 1579-Ն որոշմամբ սահմանված պահանջները, մասնավորապես, ՊՈԱԿ-ի ստացած շահույթը կանոնադրական նպատակների իրականացման համար օգտագործելու կարգի պահպանման մասով, որի համար Տնօրենը ենթակա է կարգապահական պատասխանատվության, ուստի

որոշում եմ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի <<Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Հովհաննիսյանին հայտարարել նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել Ա. Հովհաննիսյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Ա.Հովհաննիսյանին ծանուցման օրվան հաջորդող օրվանից:
4. Որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում:

պարտականությունները կատարող՝

Восстановимая подпись

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391 ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ